

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՌԱԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2019-2023թթ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-2019

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի **առաքելությունը** աշխատանքի շուկայի պահանջարկին համահունչ, մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, գիտելիքահենք տնտեսության կայացմանն աջակցող բակալավրում՝ <<Տնտեսագիտություն>>, <<Ֆինանսներ>>, <<Հաշվապահական հաշվառում և հարկում>>, <<Կառավարում>>, <<Զբոսաշրջություն>>, մագիստրատուրայում՝ <<Ֆինանսներ>>, <<Հաշվապահական հաշվառում և հարկում>>, <<Կառավարում>> մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստումն է: Ֆակուլտետի առաքելությունը բուհի առաքելության բաղադրիչն է:

Ֆակուլտետի **տեսլականն** է՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձր որակի մշակույթի ձևավորումը, մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշներին:

Ֆակուլտետի **կրթական գործունեությունը** պետք է համահունչ լինի փոփոխվող միջավայրի առաջարկող պայմաններին.

- Մշտապես ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից կրթափորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
- Մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում հաշվառել ժամանակի կրթական պահանջը և կարևորել ուսանողության կարծիքը.
- Կրթական գործընթացում ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը:

Ֆակուլտետի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը պետք է նպաստի ուսանողների անձի հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների, հետազոտական կարողությունների զարգացմանը:

Ֆակուլտետի **դաստիարակչական գործունեությունը** պետք է ուղղված լինի ուսանողների կողմից ազգային արժեքների կարևորման գիտակցության ամրակայմանը, իրենց իրավունքների և պարտականությունների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ընկալմանն ու համապատասխան վարքի դրսևորմանը:

Տնտեսագիտության ֆակուլտետի **շրջանավարտն** աներկբա հարգանք պիտի ունենա իր մասնագիտության հանդեպ, ազգային տնտեսությանը ծառայելը ընդունի որպես գերնպատակ, հարգի պետական խորհրդանիշները, ազգային ավանդույթները և անհանդուրժող լինի հակասահմանադրական ու հակահասարակական դրսևորումների նկատմամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գործողություն/միջոցառում/ծրագիր	Ցուցիչ	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետ	Ակնկալվող արդյունք
<p>ՆՊԱՏԱԿ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ Խնդիր 1.1. Մասնագիտությունների կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) դարձնել ԱՀ որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՀ) և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան</p>					
<p>1.1.1 Տնտեսագիտության ոլորտում մրցունակ, ՈԱՀ-ի բնութագրիչներին և շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և ներդրում:</p>	<p>✓ Ոլորտի պահանջի հաշվառմամբ գործնական աշխատածավալի ավելացում ^{1/2} հարաբերությամբ</p>	<p>Կրթական ծրագրերի պատասխանատուներ, ամբիոնի վարիչներ</p>	<p>ԱրՊՀ Որակի ապահովման կենտրոն, ԱրՊՀ Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին, ԱրՊՀ ամբիոններ</p>	<p>09.2019</p>	<p>ԱՀ ՈԱՀ-ի բնութագրիչներին և շուկայի պահանջներին համապատասխան բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր:</p>
<p>1.1.2 Ստեղծել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պատասխանատուների ինստիտուտ՝ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:</p>	<p>✓ Ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացում՝ լսարանային ծանրաբեռնվածությամբ՝</p>				
<p>1.1.3 Մագիստրատուրայի կրթական ծրագրերում ապահովել բակալավրիատի կրթական ծրագրի բովանդակությունը բխող և այն, փոխլրացնող ու հետազոտական բաղադրիչով ընդլայնող դասընթացների ներդրումը:</p>					
<p>1.1.4 Ձևավորել <i>գործատու-մասնագետ</i> փոխհարաբերությունների տարածք՝ ոլորտի մասնագետներին ներգրավելով ուսումնական ծրագրերի քննարկման խորհրդակցություններում, և շարունակաբար ապահովել ամփոփիչ որակավորման քննությունների հանձնաժողովներում նրանց մասնակցությունը:</p>		<p>Դեկան, ամբիոնի վարիչներ,</p>	<p>ԱՀ ԿԳՍ նախարարություն</p>	<p>2019-2020</p>	

<p>1.1.5 Իրականացնել փորձուսուցման բարելավմանն ուղղված համակարգված միջոցառումների ծրագիր՝ հետևողականորեն կազմակերպելով մինչփորձուսուցումային և հետփորձուսուցումային խորհրդակցություններ, կարևորելով և քննարկելով ակնկալիքների ու իրացված արդյունքների համապատասխանության հարցը:</p>		<p>Դեկան, ամբիոնի վարիչներ, փորձուսուցման ղեկավարներ, փորձուսուցման բաժնի վարիչ</p>	<p>ԱրՊՀ փորձուսուցման բաժին, ԱՀ ԱՎԾ, ֆինանսների նախարարություն, Արցախի ներդրումային հիմնադրամ, <<Արցախբանկ>> ՓԲԸ, <<Արցախֆրոթ>> ՓԲԸ, <<Արցախեկ>> ԲԲԸ</p>	<p>Շարունակաբար</p>	
---	--	---	--	---------------------	--

Խնդիր 1.2. Իրականացնել հետազոտահեն կրթություն

<p>1.2.1 Նպաստել ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան հետազոտական գործունեության որակի ապահովմանը</p>	<p>✓ Հետազոտություններ կատարելու հետամուտ ուսանողների թվի աճ</p>	<p>Ամբիոնի վարիչներ, գիտական ղեկավարներ</p>	<p>Ոլորտի առաջատար մասնագետներ</p>	<p>Շարունակաբար</p>	<p>✓ ՄԳԾ-ներում հետազոտական բաղադրիչի առկայություն Գիտական հետազոտություն կատարելու ունակ ուսանող</p>
<p>1.2.2 Ապահովել գիտական դասընթացային աշխատանքների թեմատիկ շարունակականությունը ավարտական աշխատանքներում:</p>					
<p>1.2.3 Նյութանել ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետ իրականացումը՝ հստակեցնելով գնահատման պահանջներն ու մեխանիզմները:</p>		<p>Ամբիոններ</p>		<p>2019-2023</p>	<p>Վերլուծական և հետազոտական մղումներով, մշտապես նորին հետամուտ, նորը հետախուզող ուսանող</p>
<p>1.2.4 Ձևավորել ուսանողի կողմից ինքնուրույն աշխատանքը որպես կրթական կարևոր բաղադրիչ և մասնագիտական կարողությունները բացահայտելու միջոց ընկալելու մշակույթը:</p>					
<p>1.2.5 Մշակել և ներդնել արդյունահեն ու ձևավորող գնահատման չափորոշիչներ ու մեխանիզմներ՝ ապահովելով հետազոտական ունակությունների ձևավորման հնարավորությունները, հիմնվելով ակնկալվող վերջնարդյունքի լիարժեք</p>	<p>✓ Յուրաքանչյուր մասնագիտական ուսումնական առարկայից ստեղծել հետազոտական</p>			<p>09.2019</p>	

<p>զնահատման վրա: 1.2.6 Ստեղծել համապատասխան գիտամեթոդական հիմք, լրամշակել առարկայական նկարագրերը՝ ապահովելով զնահատման չափորոշիչների և ձևավորվող վերջնարդյունքի չափելիությունն ու տեսանելիությունը:</p>	<p>խնդիրների, հարցերի և հանձնարարությունների ընդլայնված առաջադրանքների ցանկ</p>				
<p>1.2.7 Ստեղծել պետական չափորոշիչներին և բուհի նպատակին համահունչ ուսումնամեթոդական գիտական գրականության, դասագրքերի, ձեռնարկների էլեկտրոնային պահոց</p>	<p>✓ Մասնագիտական աղբյուրագիտական և հետազոտական հենքի ստեղծում</p>	<p>Ամբիոններ</p>		<p>2019-2023</p>	
<p>1.2.8 Ապահովել սովորողներին/հատկապես հեռակա ուսուցման համակարգի/ հիմնարար գիտելիքներն ամբողջացնող մասնագիտական ուղեցույցներով</p>					
<p>1.2.9 Նպաստել ուսանողների մոտ ազգային հարստության նկատմամբ հարգալից վերաբերմունքի ամրակայմանը գիտահետազոտական ընթերցումների, հանդիպումների հաճախականությունն ու պարբերականությունն ապահովելով:</p>	<p>✓ Հետազոտական աշխատանքներում ազգային հարստության ձևավորմանն ու պահպանմանը առնչվող գիտական վերլուծության հնարավորություն ապահովող թեմաների առկայություն</p>	<p>Ամբիոններ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի լրատվության և հանրային կապերի բաժինների, ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության, ԱՀ գյուղատնտեսության նախարարության, ԱՀ հասարակական կազմակերպությունների հետ</p>	<p>շարունակաբար</p>	<p>Բնքնաճանաչ, միջազգայնացման դաշտում բաց և համգործակցող, հետազոտական ունակություններ ունեցող անհատ</p>
<p>1.2.10 Սովորողի մոտ ձևավորել ազգային մտածողությամբ համաշխարհային ընկալելու գիտակցություն մասնագիտության շրջանակում միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը կարևորելով և այն ինքնուրույն աշխատանքների բաղադրիչ դարձնելով:</p>					
<p>Խնդիր 1.3. Ձևավորել առցանց ուսուցման հարթակ</p>					
<p>1.3.1 Նպաստել ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների, մեթոդների և տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրմանը: 1.3.2 Կրթական գործընթացում ապահովել</p>	<p>✓ Ուսումնառության գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների կիրառում ✓ SS կիրառմամբ ստեղծված</p>	<p>Դեկան, ամբիոնների վարիչներ</p>	<p>ԱրՊՀ տեղեկատվական և տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման բաժին</p>	<p>2019-2023</p>	<p>ՄԿԾ-ի վերջնարդյունքն ապահովող ուսումնառության և դասավանդման գործընթացի միարժեք կապ SS-ի արդյունավետ կիրառմամբ</p>

<p>տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը: Առարկայական ծրագրերին համապատասխան ստեղծել էլեկտրոնային ուսուցողական նյութեր՝ այդ նպատակով օգտագործելով նաև ուսանողների կողմից կատարված նպատակային ինքնուրույն աշխատանքները:</p>	<p>ուսումնական նյութերի էլեկտրոնային բանկի առկայություն ամբիոններում, գրադարանում</p>			
<p>1.3.3 Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և կիրառման համար:</p>				
<p>1.3.4 Ֆակուլտետի հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:</p>				
<p>Խնդիր 1.4 Համալրել և կատարելագործել պրոֆեսորադասախոսական կազմը՝ մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան</p>				
<p>1.4.1 Բրակնացնել առկա ներուժի գնահատում՝ ըստ մատուցվող կրթական ծրագրերի, մասնագիտական որակների և տարիքային կազմի:</p>		<p>Դեկան, ամբիոնների վարիչներ</p>	<p>2019-2020</p>	<p>Ֆակուլտետի առաքելությանը համարժեք ՄԿՕ-ների կրթական վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող ՊԴ կազմի առկայություն</p>
<p>1.4.2 Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:</p>				
<p>1.4.3 Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը ուղղված՝</p> <ul style="list-style-type: none"> • կրթական նոր տեխնոլոգիաների, համապատասխան դասավանդման մեթոդների յուրացմանը, • էլեկտրոնային ուսուցողական նյութերի ստեղծմանը, • օրինակելի դասախոսավարության և դասագործընթացի կազմակերպման մշակույթի ձևավորմանը 		<p>ՈւԳՎ Բաժին, որակի ապահովման կենտրոն, ամբիոններ</p>	<p>Ֆակուլտետի ուսումնական գործընթացի իրականացմանը մասնակցող այլ ֆակուլտետների ամբիոններ (մաթեմատիկայի, կիրառական մաթեմատիկայի, օտար լեզվի, իրավունքի,</p>	<p>2019-2023</p>

			պատմության, աշխարհագրության և այլն):		
1.4.4 Նպատակ գիտամանկավարժական դասախոսների գործունեության արդյունավետությունը խթանող ընթացակարգերի մշակմանն ու մեխանիզմների ներդրմանը ապահովելով վարկանշավորման համակարգի գործունեությունն ու օբյեկտիվ իրականացումը:		Դեկան, ամբիոնների վարիչներ		շարունակաբար	
1.4.5. Ապահովել ամբիոնների կադրուժի երիտասարդացման գործընթացի շարունակականությունը:		Դեկան, ամբիոնների վարիչներ		շարունակաբար	

ՆՊԱՏԱԿ 2.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ

Ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, որը կկարողանա հետազոտել և շարունակական լուծումներ առաջարկել Արցախի Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ, կնպաստի հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը:

Խնդիր 2.1 Ձևավորել անհրաժեշտ ներառական միջավայր գիտության բոլոր բնագավառների ուղղությամբ ԱրՊՀ հիմնարար, հիմնախնդրային, կիրառական շեշտադրմամբ հետազոտությունների համար:

2.1 Ֆակուլտետի ամբիոններում ձևավորել գիտական հանձնախմբեր, որոնց գիտական գործունեությունն ուղղված լինի <ul style="list-style-type: none"> • միջգիտակարգային հետազոտություններ կատարելուն • արցախյան իրականությանը վերաբերող մասնագիտական խնդիրների ուսումնասիրությանը • գիտական դպրոցների ձևավորմանը 		Դեկան	ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին, ԱՀ գիտական կենտրոն, ԱՀ և ՀՀ բուհեր, չճանաչված երկրի բուհեր, միջազգային կազմակերպություններ		Արդիական և առևտրայնացման ենթակա հետազոտություններ
2.1.1 Հստակեցնել ֆակուլտետի հետազոտական ներուժի հնարավորությունները և դրանց իրացման պայմանները:		Դեկան, ամբիոնի վարիչներ			
2.1.2 Համապատասխան մասնագիտության գծով, Արցախի գիտահետազոտական կարիքներին համապատասխան, գիտահետազոտական					

<p>թեմաների ցանկը միտել կիրառական հետազոտության, և ըստ այդմ՝ հանձնարարվող գիտական դասընթացային, ավարտական, մագիստրոսական աշխատանքները դիտել այդ արդյունքին հասնելու և այն ապահովող քայլեր:</p>				
<p>Խնդիր 2.2 Ներգրավել ՀՀ և միջազգային հետազոտական ներուժը ֆակուլտետում իրականացվող նախագծերին:</p>				
<p>2.2.1 Ակտիվորեն ներգրավվել միջազգային, ՀՀ և ԱՀ գիտական ծրագրերի կատարման գործընթացում, մասնակցել միջազգային գիատժողովների, խթանել միջազգային գիտական հանրությունում դասախոսական անձնակազմի ներկայությունը և ակտիվ մասնակցությունը՝ խրախուսելով գիտական արդյունքի ստեղծումը և դրանց հանրայնացումը միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում:</p>	<p>✓ Գիտահետազոտական ծրագրերում և միջոցառումներում դասավանդողների և ուսումնառողների մասնակցության թվի աճ ✓ Միջազգային գիտական հանրություն ակտիվ ներգրավվածություն և բուհի վարկանիշի աճ</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ</p>	<p>ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին, ԱՀ գիտական կենտրոն, ԱՀ և ՀՀ բուհեր, չճանաչված երկրի բուհեր, միջազգային կազմակերպություններ</p>	<p>1. Ֆակուլտետի գիտնականների հրատարակած աշխատություններ, դասագրքեր, միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրատարակված հոդվածներ: 2. Գիտական հետազոտության խնդիրները ճանաչող և դրանք լուծելուն ունակ սովորող</p>
<p>2.2.2 Ուսանողներին մասնակից դարձնել գիտական հետազոտություններին՝ ապահովելով նրանց գիտական առաջընթացի քայլերի շարունակականությունը և կադրային հերթափոխի պատրաստումը:</p>				
<p>2.2.3 Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ուղղորդումը և մեծացնել ՈւԳԸ մասնակցությունն ու պատասխանատվությունը ֆակուլտետի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման գործում:</p>				
<p>2.2.4 Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում, ներդնել կամրնտրական դասընթացներ:</p>				

<p>2.2.5 Խթանել և աջակցել պետական չափորոշիչներին և բուհի նպատակին համահունչ ուսումնամեթոդական գրականության, դասագրքերի, ձեռնարկների մշակումը, գիտական արդիական մենագրությունների հրատարակումը:</p>	<p>✓ Մասնագիտական հիմնարար գիտելիքներն ամբողջացնող դասագրքերի հրատարակում</p> <p>✓ Սովորողներին/հատկապես հեռակա ուսուցման համակարգի/ մասնագիտական առաջին ուղեցույց-դասագրքերով ապահովում</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ</p>			<p>Մասնագիտական աղբյուրագիտական հենքի ստեղծում</p>
--	--	--------------------------------	--	--	--

ՆՊԱՏԱԿ 3.

ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՍՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՂՆԵՐ

Ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում:

Ապագա դիմորդների նախաբուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի զարգացում:

Ուսումնառողների ներգրավման և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում:

Խնդիր 3.1 Ֆակուլտետի՝ որպես համամարդկային և ազգային արժեհամակարգը կարևորող մանկավարժի, մասնագետի կրթողի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման:

<p>3.1.1 Չարգացնել միասնական տեղեկատվական համակարգը դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար և ֆակուլտետի գործունեության, կրթական գործընթացի, մասնագիտությունների վերաբերյալ տրվող տարբեր նյութերը լրատվամիջոցներով հասանելի դարձնել նրանց:</p>	<p>✓ Ֆակուլտետի կրթական ծառայություններից բավարարվածություն:</p> <p>✓ Ֆակուլտետի միջոցառումներին, ինտելեկտուալ խաղերին ակտիվ մասնակցություն</p>	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ</p>	<p>ԱրՊՀ լրատվության և հանրային կապերի բաժին, ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԽ կառույց</p>	<p>շարունակաբար</p>	<p>Ֆակուլտետի դրական վարկանիշ բարձր</p>
<p>3.1.2. Ստեփանակերտում, շրջկենտրոններում ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար անցկացնել գիտական ընթերցումներ, դասախոսություններ տնտեսագիտական արդիական թեմաներով:</p>					
<p>3.1.3. Ֆակուլտետում կազմակերպել «Օրակարգում»</p>					

մասնագիտական կողմնորոշման խնդիրը» խորագրով քննարկում հանդիպում՝ հանրապետության հիմնական և ավագ դպրոցների ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ:					
---	--	--	--	--	--

Խնդիր 3.2. Մշակել և կազմակերպել աշակերտների շրջանում ԱրՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի կողմից իրականացվող մասնագիտությունների գրավչության ամրապնդմանը, դիմորդների ներգրավմանը նպաստող միջոցառումներ:

3.2.1 Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր», «Մասնագիտական տոնավաճառներ» և ճանաչողական այցեր ֆակուլտետ և ֆակուլտետի մասնագիտական կաբինետներ:	✓ Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում տնտեսագիտական ուղվածությունը նախընտրող դիմորդների առնվազն 25 % /13,5/ մասնաբաժին:	Դեկան, ամբիոնի վարիչներ, մեթոդիստ	ԱրՊՀ լրատվության և հանրային կապերի բաժին, ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՖՈւԽ և ՈւԽ կառույցներ:	Չարունա կաբար	1. Ներգրավված դպրոցներ և այլունավետ աշխատանք 2. Ուսանողների հավաքագրման և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ
3.2.2 Ակտիվացնել դիմորդների հետ հանդիպումները և ապահովել ֆակուլտետի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:					
3.3.3 Ակտիվացնել ԱրՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների հետ հարաբերությունները՝ դրանք դարձնելով պրակտիկ և արդյունաստեղծ:					
3.3.4 Ֆակուլտետի դասախոսական կազմի և բարձր կուրսերի ուսանողների կողմից մայրաքաղաքի և շրջկենտրոնների ավագ դպրոցներում կազմակերպել առանձին դասախոսություններ:					

Խնդիր 3.3. Ուսանողների ինքնավարության ընդլայնում:

3.3.1. Բարձրացնել ուսանողների իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակը՝ ուղեցույցներ ու ծանուցաթերթիկներ տրամադրելով, ամենամյա թեմատիկ /Իրազեկ ուսանող/մրցույթ կազմակերպելով, ավագների հետ ամենամյա հանդիպումներով, նաև կուրսղեկի ինստիտուտի միջոցով ու մշտակա հետևողությամբ:	✓ Ուսանողական լախաձեռնող ակտիվի առկայություն և ուսանողների մասնակցության աճ շուրջ միջոցառումներում	Դեկան, տեսուչ, մեթոդիստ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՖՈւԽ և ՖՈւԳԸ կառույցներ	Չարունա կաբար	Ուսանողների մասնակցության ապահովում ֆակուլտետի ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում
---	--	-------------------------	---	---------------	---

<p>3.3.3.Նպաստել ուսանողական կազմակերպությունների հետազոտական գործունեությանը, խթանել կամավորական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը:</p>					
<p>3.3.4. Ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը գիտաժողովներին ու տարբեր ծրագրերին՝ արտագնա գիտաժողովների գործուղման հնարավորություններն օգտագործելով և խրախուսելով նրանց մասնակցությունը:</p>					
<p>3.3.5.Նպաստել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողների հետազոտական և միջանձնային շփման հմտությունների և հաղորդակցության առողջ մշակույթի ձևավորմանը՝ գիտական սեմինարների, վերապատրաստումների միջոցով:</p>					

Խնդիր 3.4 Ուսանողներին տրամադրվող օժանդակ ծառայությունների արդյունավետության բարձրացում

<p>3.4.1 Նպաստել շրջանավարտների ամենամյա հարցման անցկացման գործընթացին՝ կարևորելով ուսանողի օբյեկտիվ գնահատումը և շարունակաբար լավարկել այդ գործընթացի կազմակերպումը:</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Արդյունավետ ծառայություններ ✓ Ծառայությունների գնահատման արդյունքների առկայություն 	<p>Դեկան, ամբիոնի վարիչներ, տեսուչ, մեթոդիստ</p>	<p>Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ՝ ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԽ և ՈւԳԸ կառույցներ, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին</p>	<p>շարունակաբար</p>	<p>Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և ուսումնառության արդյունավետությունը խթանող գործուն մեխանիզմներ</p>
<p>3.4.2. Մտեղծել ֆակուլտետի՝ սոցիալական խոցելի խմբերի ուսանողների տվյալների բանկ՝ նրանց կարիքների բավարարման շրջանակն ընդլայնելով և առկա հնարավորություններն ու ծառայությունները նպատակային օգտագործելով:</p>				<p>09.2019</p>	
<p>3.4.3. Մտեղծել թեմատիկ ուղղվածության խմբեր՝ ոչ ֆորմալ կրթության շրջանակներում կազմակերպվող դասընթացներում նպատակային մասնակցություն ապահովելով:</p>			<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>09.2019</p>	

3.4.4. Ապահովել շրջանավարտների հետ համալսարանի և տնտեսագիտական ֆակուլտետի շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից համալսարանին և ֆակուլտետին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:		Դեկան, տեսուչ, մեթոդիստ	ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈԻԳԿ բաժին	շարունակաբար	
---	--	-------------------------	--	--------------	--

ՆՊԱՏԱԿ 4.

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Բարելավել ֆակուլտետի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը

Խնդիր 4.1. Կատարելագործել ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքը:

4.1.1. Նպաստել ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետության բարձրացմանը՝ ամբիոնների միջև համագործակցային հարաբերությունները խորացնելով և իրականացվող աշխատանքների թափանցիկությունն ապահովելով:	Ֆակուլտետի կառավարման համակարգի արդյունավետության դիտարկման արդյունքները՝ ամբիոնների կողմից	Ֆակուլտետի խորհուրդ		շարունակաբար	Ֆակուլտետի առաքելությանը համապատասխան կազմակերպական կառուցվածք
4.1.2. Ստեղծել ուսումնական և աշխատանքային առողջ և արդիական միջավայր՝ բոլոր սովորողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով՝ ապահովելով ֆակուլտետի ներուժի նպատակային օգտագործումը:	Ամբիոնների աշխատանքի հաշվետվողականության և առկայություն	Ֆակուլտետի խորհուրդ		շարունակաբար	
4.1.3. Ապահովել վարչական աշխատակազմի աշխատանքների թափանցիկությունն ու մատչելիությունը		Դեկան, տեսուչ, մեթոդիստ, լաբորանտներ		շարունակաբար	

Խնդիր 4.4. Համապատասխանեցնել մարդկային ռեսուրսների կառավարումը ֆակուլտետի ռազմավարական նպատակներին

4.4.1. Ուսանողության շրջանում բարեհարմար պայմաններ ստեղծել կատարելագործել ուսանող-դասախոս փոխհարաբերությունների անմիջականության ու վստահության մշակույթը:		Դեկան, ամբիոնների վարիչներ	Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ	շարունակաբար	<input checked="" type="checkbox"/> Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգ, <input checked="" type="checkbox"/> Ուսումնառության բարեհարմար պայմաններ
---	--	----------------------------	---	--------------	--

<p>4.4.2.Նպաստել վարչակազմի փուլային երիտասարդացման քաղաքականությանը, ստեղծել կայուն պահեստուժ և մրցակցային միջավայր՝ պրոֆետրադասսխոսական անձնակազմի որակյալ համալրումն ապահովելու նպատակով.</p>	<p>Երիտասարդ աշխատակազմի թվի աճ</p>	<p>Ֆակուլտետի խորհուրդ</p>	<p>ԱրՊՀ գիտքարտուղար, կադրերի բաժին, ՈԻԳԿ բաժին, ՈւՀՏԱ և կարիերայի բաժին</p>	<p>2019-2023</p>	
--	-------------------------------------	----------------------------	--	------------------	--

ՆՊԱՏԱԿ 5.

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով ֆակուլտետի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Խնդիր 5.1. Ապահովել ֆակուլտետի հանրային պատասխանատվության մեծացումը

<p>5.1.1.. Բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը՝ ՖՈւԽ գործունեության արդյունավետությունը բարձրացնելով և հնարավորություններն այդ նպատակով օգտագործելով:</p>		<p>Դեկանատ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի լրատվության և հանրային կապերի բաժինների, ԱՀ մշակույթի նախարարության, ԱՀ հեռուստատեսության, ԱՀ հասարակական կազմակերպություններ, Հայ-ամերիկյան համալսարանի շարունակական կրթության ԱՀ համակարգող կառույց, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Արցախի գրասենյակ</p>	<p>շարունակաբար</p>	<p>Քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ</p>
<p>5.1.2. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը՝ օգտագործելով տարբեր բնագավառներում հաջողություններ գրանցած ֆակուլտետի շրջանավարտների ներուժը:</p>					

Խնդիր 5.2.Կազմակերպել կրթական, տնտեսական, սոցիալական, գիտական և մշակութային միջոցառումներ՝ ֆակուլտետի ռազմավարական նպատակներին համապատասխան:

<p>5.2.1. Ֆակուլտետի ուսանողների մոտ մասնագիտության արժևորման և տնտեսագիտական մասնագիտությունների նկատմամբ պատասխանատվության գիտակցության ամրակայում՝ մասնագիտական ֆորումները, հանդիպումները, ճանաչողական այցերը պարբերական դարձնելով:</p>	<p>Դեկանատ</p>	<p>Դեկանատ, ամբիոններ</p>	<p>Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ՝ ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԳԿ բաժին, ՈւԽ և ՈւԳԸ կառույցներ, ԱրՊՀ ֆակուլտետներ</p>	<p>շարունակաբար</p>	<p>Համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինն առաջնահերթորեն կարևորող արհեստավարժ մասնագետ</p>
<p>5.2.2. Իրականացնել հոբբեյանական միջոցառումներ, տարվա ժամանակագրությանը համապատասխան, ուսումնական գործընթացը փոխլրացնող միջոցառումներ</p>					
<p>5.2.3 Կազմակերպել Արցախյան ազատամարտի մասին դասընթացներ, արհուրյան դասեր</p>		<p>Ամբիոններ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի, լրատվության և հանրային կապերի բաժինների հետ</p>	<p>շարունակաբար</p>	
<p>5.2.4. Նպաստել իր պատմությանը ծանոթ և ժառանգաձի պատասխանատվությունը կրող անհատի գիտակցության ձևավորմանը</p>		<p>Դեկան, ամբիոնների վարիչներ</p>	<p>Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգող բաժիններ՝ ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին, ՈւԽ և ՈւԳԸ կառույցներ</p>	<p>շարունակաբար</p>	

ՆՊԱՏԱԿ 6.
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ
Ապահովել ֆակուլտետի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ԱրՊՀ գործունեության միջազգայնացումը:

Խնդիր 6.1. Ընդլայնել և բազմազանեցնել ֆակուլտետի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները.

<p>6.1.1. Ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը շարժունության ծրագրերին:</p>	<p>Նոր ու ժամանակակից կրթափորձի ճանաչում և յուրացում.</p>	<p>Դեկանատ, ամբիոններ,</p>	<p>ՈւԳԿ բաժին, ՈԻԽ, ՈԻԳԸ ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և</p>	<p>շարունակաբար</p>	<p>Համալսարանի ՌԾ նպատակներին համապատասխան միջազգային գործունեության ընդլայնման արդյունքում իրագործված ծրագրեր</p>
<p>6.1.2. Ամրապնդել կապերը Պրահայի համալսարանի << Տնտեսագիտական հետազոտությունների >> կենտրոնի, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի, ՀՀ բուհերի՝ ՀՊՏՀ-ի, ԵՊՀ-ի, <<Հայ-</p>	<p>Ֆակուլտետի կապերի ընդլայնում, միջազգայնացում</p>	<p>Դեկանատ, ամբիոններ,</p>	<p>միջազգային համագործակցության բաժին, կադրերի բաժին:</p>	<p>շարունակաբար</p>	

<p>ռուսական>> համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ:</p>					
<p>6.1.3.Նպաստել հրավիրյալ դասախոսի ինստիտուտի ստեղծմանը և հրավիրված օտարերկրյա դասախոսների ԱրՊՀ պարբերական այցելություններին՝ ընդլայնելով ֆակուլտետի կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները:</p>	<p>Առկա հնարավորությունների արդյունավետության բարձրացում</p>	<p>Դեկանատ, ամբիոններ</p>	<p>ԱրՊՀ ՈւՀՏԱ և կարիերայի բաժին</p>	<p>09.2019</p>	